

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ Ուրբաթ, 29 Նոյեմբերի, 2007

Մոնթբելլոյի քաղաքապետական խորհուրդը եւս միանալով Կալիֆորնիայի հայահոծ քաղաքների, որոնց թւում Գլենդէլի քաղաքապետական խորհուրդներին, Չորեքշաբթի, Նոյեմբերի 28-ի հերթական նիստում միաձայնութեամբ վաւերացրեց զօրակցական յատուկ բանաձեւ, որը Միացեալ Նահանգների Կոնգրէսին կոչ է անում անվերապահօրէն վաւերացնել Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող թիւ 106 բանաձեւը: Մոնթբելլոյի սոյն նիստին ներկայ են գտնուել շրջանի աւելի քան 100 ամերիկահայեր, որոնց թւում Մոնթբելլոյի Մերոպեան ազգային վարժարանի բազմաթիւ աշակերտներ, ովքեր քաղաքապետական խորհուրդ էին ներկայացել իրենց ուսուցիչների գլխաւորութեամբ: «Մեզ մասնաւորաբար մեծ ուրախութիւն պատճառեց պահանջատէր ամերիկահայ նոր սերնդին մաս կազմող Մերոպեան վարժարանի աշակերտութեան ներկայութիւնը Մոնթբելլոյի քաղաքապետական խորհրդի յիշեալ նիստին», - ասել է ՀՅԴ Սան Գաբրիէլ հովտի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Վիզէն Բագրատունին: Նշենք, որ նիստին ներկայ են գտնուել նաեւ Հայ Օգնութեան Միութեան Մոնթբելլոյի մասնաճիւղի, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան եւ շրջանի հայկական այլ կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի եւ Սան Գաբրիէլ Հովտի Հայ Դատի Յանձնախմբի համատեղ պատուիրակութիւնը Նոյեմբերի 27-ին հանդիպում է ունեցել Միացեալ Նահանգների Կոնգրէսի անդամուհի Գրէյս Նափոլիթանոյի հետ, քննարկելով համայնքին յուզող մի շարք հարցեր: Կոնգրէսական Նափոլիթանօն մեծապէս գնահատել եւ ողջունել է այս հանդիպումը, այն «թարմացնող եւ անհրաժեշտ» բնութագրելով: Նա նաեւ քաջալերական է համարել ամերիկահայ համայնքի անդամների հանդիպումները երկրի ընտրեալ պաշտօնատարների հետ՝ թէ՛ տեղական եւ թէ՛ համաամերիկեան մտահոգութիւնների կապակցութեամբ եւ այս առիթով յոյս յայտնել, որ Հայ Դատի Յանձնախմբի հետ իր գործակցութիւնը առաւելապէս կը ծաւալուի: Հանդիպման ընթացքում, Յանձնախմբի անդամները տիկ. Նափոլիթանոյին են ներկայացրել վերջին զարգացումները 106-րդ բանաձեւի կապակցութեամբ: Ի պատասխան, տիկին Նափոլիթանօն վերահաստատել է իր անվերապահ զօրակցութիւնը բանաձեւի նկատմամբ:



Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի նախկին անդամուհի եւ նահանգային Սենատի թեկնածու Քարոլ Լուին զօրեղ գրութիւն է յղել Միացեալ Նահանգների Կոնգրէսի անդամուհի Ջէյն Հարմընին, քննադատելով Հարմընի կեցուածքը Հայոց Ցեղասպանութեանը վերաբերող 106-րդ բանաձեւի կասեցման ուղղութեամբ: «Միացեալ Նահանգների արտաքին քաղաքականութիւնը ոչ թէ պէտք է հիմնուած լինի թուրքական պետութեան պէս օտարերկրեայ որեւէ պետութեան սպառնալիքների, այլ իր իսկ գաղափարների հաստատման վրայ», - նշել է Քարոլ Լուին: ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի գործադիր տնօրէն Անդրանիկ Կիզիրեանը դրուատանքով է անդրադարձել Քարոլ Լուի սոյն գրութեանը, շեշտելով, թէ նա խօսել է ճշմարտութեան հզօր դիրքերից, որը վայելում է ամերիկահայութեան զօրակցութիւնն ու յարգանքը:



Երեքշաբթի, Նոյեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Գլենդէլի Սուրբ Աստուածածին եկեղեցուն նշուեց Խրիմեան Հայրիկի վախճանման 100-ամեակը: Միջոցառումը կազմակերպել էր Ազգային Առաջնորդարանի Առաքելական տարածման յանձնախումբը, թեմիս առաջնորդ Մուշեղ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանի հովանաւորութեամբ: Ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները եւ համայնքի շուրջ 650 անդամներ, որոնց զգալի մասը՝ երիտասարդներ: Միջոցառմանը ելոյթ ունեցաւ Պարթեւ Վարդապետ Կիւլիւմեանը, որը դրուագներ ներկայացնելով Խրիմեան Հայրիկի կեանքից, անդրադարձաւ Հայրիկի

յեղափոխական հոգեւորականի կերպարին եւ ժողովրդանուէր ծառայութեանը: Խրիմեան Չայրիկի ողջ կեանքը նշանաւորուեց հայ ժողովրդի արդար իրաւունքների նուաճման պայքարով, որի պերճախօս վկան հանդիսացաւ «Երկաթ շերտիով» պահանջատիրութեան դաշտ իջնելու նրա նշանաւոր պատգամը,- իր ելոյթը եզրակացրեց Չայր Պարթեւը: Միջոցառմանը գործադրուեց գեղարուեստական ծրագիր եւ ընթերցուեց հայ մտաւորականների գնահատականները Խրիմեան Չայրիկի ազգանուէր գործունէութեան մասին:



Կիրակի, Նոյեմբերի 18-ին եկեղեցական ու ժողովրդական արարողութիւններով նշուեց Յոլիվուդի Սբ. Կարապետ եկեղեցւոյ հիմնադրութեան 30ամեակը, թեմիս առաջնորդ Սուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսեանի նախագահութեամբ: Կրօնական հոգեպարար արարողութիւնից յետոյ եկեղեցւոյ «Կարապետեան» սրահում տեղի ունեցաւ ճաշկերոյթ-մոմավառութիւն, որին ներկայ գտնուեցին առաջնորդ Սրբազան Չայրը, Զ.Յ.Դ. Կենտրոնական Կոմիտէի, Յոլիվուդի «Գարեգին Նժդեհ» կոմիտէութեան, Զ.Մ.Ը.Մ.ի Լոս Անջելոսի մասնաճիւղի, Լոս Անջելոսի ռումինահայոց «Րաֆֆի» մշակութային միութեան, Տարօն-Տուրութեանի հայրենակցական միութեան ներկայացուցիչները եւ շուրջ 300 այլ հրաւիրեալներ: Միջոցառման ընթացքում խօսուեց շրջանի հայութեանը Սբ. Կարապետ եկեղեցւոյ մատուցած ծառայութեան եւ ծաւալած ազգային, կրօնական գործունէութեան մասին: Գործադրուեց նաեւ գեղարուեստական ծրագիր` Յոլիվուդի «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս» ազգային վարժարանի աշակերտների կատարմամբ:

**Այս լուրերը տրամադրուած են
ՅՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Չանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**